2022, ԱՊՐԻԼ Բ, ԹԻՎ 8 (604)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի դատգամը մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարության տոնի առիթով

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ուրախացան ազգք մարդկան, յորժամ լուան զՔո յարութիւնդ»
(Ժամագիրք):

Սիրելի՛ հավատավոր զավակներ,

Սուրբ Հարության հրաշափառ տոնին քրիստոնյա ողջ աշխարհը վերստին փառաբանում է հարուցյալ Փրկչին, որ խաչվեց եւ հարություն առավ մարդկանց մեղքերի քավության համար՝ մարդկությանը պարգեւելով չարչարանքներից վեր հառնելու ուժը եւ հավիտենական կյանքը ժառանգելու շնորհը: Տիրոջ հարությամբ համախմբվեցին հուսալքված ու շփոթահար առաքյալները եւ հարության բերկրությունն ու մխիթարությունն իրենց սրտում՝ Քրիստոսի կենարար վարդապետությունը տարածեցին աշխարհում եւ տերունապատվեր սիրո պատգամը հաստատեցին հավատացյալների հոգիներում:

Այսօր մենք եւ ազգիս աշխարհասփյուռ հավատավոր զավակները, համախմբված եկեղեցիներում, Վերնատանը հավաքված առաքյալների պես զգում ենք Տիրոջ օրհնաբեր ներկայությունը, յուղաբեր կանանց հետ տեսնում թափուր գերեզմանը, լսում հարության հրեշտակաձայն ավետիսը. «Այստեղ չէ, այլ հարություն առավ»:

Քրիստոսի Հարության տոնը մարդու հանդեպ աստվածային անսահման սիրո, մեղքի ու մահվան հանդեպ հաղթանակի տոնն է: Փրկչի սերը թեեւ հանդիպեց ատելության ու թշնամանքի, սակայն Տերը երբեք չտարակուսեց եւ չընկրկեց: Մարդկանց նկատմամբ Նրա հոգատարությունը թեեւ բախվեց մերժումի, Նրա բերած ճշմարտությունը հակադարձվեց կեղծիքով, բայց Քրիստոս իրագործեց Իր առաքելությունը՝ հանուն մարդկության փրկության, եւ հարություն առնելով հաշտություն հաստատեց աշխարհի եւ Աստծու միջեւ: Արդարեւ, հարությունն այնտեղ է, որտեղ տերունավանդ սերն է հաղթանակում: Հարության փրկարար շնորհով զորանում են հավատացյալ անձերը եւ արժանի դառնում հավիտենական կյանքի: Հարությունը կենդանություն է բերում մեղքերով ծանրաբեռնված հոգիներին եւ մարդու ընթացքը ամուր պահում հույսի, սիրո եւ արդարության մեջ:

Քրիստոսի փրկագործությամբ արշալույսված դարերի հոլովույթում հարության հավատն ու շնորհը վերափոխել են անձերի ու ժողովուրդների, գոտեպնդել պատուհասների ու փորձությունների մեջ, զորություն պարգեւել հաղթահարելու խաչելությունները, վեր հառնելու գողգոթաներից եւ հաղթանակած քայլելու հարուցյալ կյանքի ճանապարհով: Այս ճշմարտությամբ ներշնչված է սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետն օրհնաբանում Տիրոջ հրաշափառ հարությունը՝ ասելով. «Ուրախացան ազգք մարդկան, յորժամ լուան զՔո յարութիւնդ»: ➥ էջ 2

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակի օրվա առիթով

(24 ապրիլի, 2022 թ.)

Սիրելի՛ ժողովուրդ հայոց ի հայրենիս եւ ի սփյուռս,

Այսօր, համախմբվելով մեր սրբազան տաճարներում, մեր քայլերն ուղղելով դեպի Ծիծեռնակաբերդի բարձունք, դեպի աշխարհասփյուռ համայնքներում կանգնեցված խաչքարեր ու հուշակոթողներ, մեր խոնարհումն ենք բերում Հայոց ցեղասպանության սուրբ նահատակներին: Նրանք զոհ գնացին օսմանյան իշխանությունների ցեղասպան ծրագրին իրենց հայրենի բնակավայրերում եւ գաղթի ճանապարհներին՝ մարտիրոսությամբ վկայելով հավատարմությունը նախնյաց հավատին, դավանած արժեքներին եւ ազատ ու անկախ կյանքի տեսիլքին:

Եղեռնահար ու հայրենազրկված մեր ժողովուրդը, առ Աստված ապավինությամբ, կամք եւ ուժ գտավ՝ վերընձյուղելու իր անկախ պետականությունը պատմական հայրենիքի արեւելյան փոքր հատվածում եւ շեն ու բարօր կյանք կերտելու իր զավակներին ապաստան տված աշխարհի տարբեր երկրներում:

Ցեղասպանությունից մեկ դար անց՝ արցախյան 44-օրյա պատերազմից հետո, մեր երկրի առջեւ ծառացած մարտահրավերները, հայրենիքի շուրջ ծավալվող աշխարհաքաղաքական գործընթացները, Ադրբեջանի ագրեսիվ

ու հայատյաց քաղաքականությունը փաստում են, որ վերացված չեն հայրենաբնակ մեր ժողովրդի, ի մասնավորի՝ Արցախի հայորդիների ապահով ու անվտանգ կյանքի սպառնալիքները: Մեր սուրբ նահատակների հիշատակի առջեւ նվիրական մեր պարտքն է համախմբվել եւ պաշտպանել արցախահայ մեր ժողովրդի ազատ ու անկախ ապրելու իրավունքը, Հայաստան ու Արցախ մեր աշխարհի անվտանգությունը, կանխել Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հայկական հոգեւոր-մշակութային ժառանգության բարբարոսաբար ոչնչացումը, որ չկրկնվի Նախիջեւանում իրագործված մշակութային եղեռնը: Այլեւ նվիրական մեր պարտքն է հետամուտ լինել Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչմանն ու դատապարտմանը, որ երբեք նման ոճրագործություն տեղ չգտնի մարդկության կյանքում, եւ արդարություն իրականացվի ցեղասպանության զոհերի եւ ցեղասպանություն վերապրած բոլոր ժողովուրդների նկատմամբ: Պետական եւ ազգային-եկեղեցական կառույցների, ամենքիս հանձնառությունը պիտի շարունակի մնալ միջազգային հարթակներում բարձրաձայնումը Արցախի մեր ժողովրդի ոտնահարվող իրավունքների եւ հայոց արդար դատի՝ ի խնդիր ազգիս արժանապատիվ եւ լուսավոր կյանքի ու գալիքի:

Մեր աղոթքն է, որ հարուցյալ Տերը, մեր սուրբ նահատակների բարեխոսությամբ, խաղաղություն պարգեւի ողջ աշխարհին, ապահովություն ու բարօրություն՝ Հայաստան եւ Արցախ մեր երկրին եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդին: Թող Բարձրյալի ողորմությունը, օրհնությունն ու խնամքը հովանի լինեն ամենքիս, այսօր եւ միշտ. ամեն:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Դատգամը մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարության տոնի առիթով

↩ էջ 1

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ, այսօր մարդկության կյանքն ալեկոծված է պառակտումներով, հակառակություններով, ազգամիջյան ատելության կորստաբեր ընթացքներով:

Մենք տեսնում ենք, թե ինչպիսի վտանգների մեջ է աշխարհը ծավալվող քաղաքական զարգացումներով, որոնք հանգեցնում են միջպետական, տնտեսական եւ սոցիալական լրջագույն խնդիրների, խաթարում են երկրների եւ ժողովուրդների ներդաշնակ համակեցությունը: Աղոթենք, որ փոխհասկացողության եւ համերաշխության ոգին առավել զորանա մարդկանց մեջ, եւ խաղաղությունը տիրի ողջ աշխարհում, հատկապես այս օրերին՝ Ռուսաստանի Դաշնության եւ Ուկրաինայի եղբայր ժողովուրդների կյանքում: Թող Աստծու առաջնորդությամբ մարդկության կյանքում շուտափույթ հանգուցալուծում գտնեն բոլոր բարդ ու մտահոգիչ իրավիճակները՝ զերծ պահելու աշխարհը նոր աղետներից: Մեր Տերն այսօր էլ մարդկությանը տալիս է խաղաղության, եղբայրսիրության պատգամները եւ կոչում ապրելու աստվածապաշտությամբ ու մարդասիրությամբ: Միայն հարուցյալ ընթացքով, Քրիստոսի պատվիրանների համաձայն ապրելով կարող ենք նոր կյանք արարել, որպեսզի, ըստ առաքյալի հորդորի, «ինչպես որ Քրիստոս մեռելներից հարություն առավ Հոր փառքով, նույնպես եւ մենք քայլենք նոր կյանքով» (Հռ. Զ 4):

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ, սուրբ հարության ավետիսն այսօր առանձնակի մխիթարություն ու սփոփանք է բերում համայն մեր ժողովրդի՝ ի մասնավորի պատերազմի արհավիրքներ ապրած մեր եղբայրներին ու քույրերին, որոնք այս պահին էլ վշտերի, նեղությունների մեջ են, անկայուն խաղաղության ու անապահովության պայմաններում: Հատկապես այս դժվարին ժամանակներում մեր կյանքը հավատքի եւ հավատո գործոց կարիքն ունի, որպեսզի հարատեւի հարության ուրախության մեջ եւ բարեզարդվի նորանոր

իրագործումներով ու հայրենաշեն ձեռքբերումներով: Ազգային մեր անդաստանում հարուցյալ կյանքը նաեւ նշանակում է ողջախոհություն, անկախ քաղաքական հայացքներից ու տարակարծություններից՝ առ հայրենին հավատարմություն եւ ազգին անսակարկ նվիրում: Այս ոգով մեր կյանքից պիտի մերժենք անտարբերությունը, անհանդուրժելի, աղետաբեր հարմարվողականությունը եւ հզորություն, միաբանություն ու առաջընթաց ապահովենք աշխարհասփյուռ մեր ժողովրդին եւ շեն ու բարօր ապագա՝ սերունդներին:

Ամենքս այսօր մտահոգ ենք մեր երկրի, մեր պետականության անվտանգության խնդիրներով, արտաքին մարտահրավերներով, ներհասարակական ու ներքաղաքական անհանգստություններով ու լարվածությամբ: Մտահոգ ենք մեր հայրենյաց սրբազան մասունքի՝ Արցախի բարդ իրավիճակով, որի նկատմամբ տակավին շարունակվում են սադրանքներն ու ոտնձգությունները: Սիրելի՛ արցախցիներ, Մենք քաջ գիտենք ձեր հերոսական ոգին, ձեզ հատուկ արիությունն ու փորձություններին դիմակայելու հաստատակամությունը: Վստահ ենք՝ դուք չեք ընկճվելու դժվարությունների հանդիման եւ շենացնելու եք ձեր հարազատ բնօրրանը՝ առ Աստված ապավինությամբ վառ պահելով հույսն ու հավատը, որ մարդասիրությունն ու արդարությունը պիտի հաղթեն, որ պիտի ծագի Արցախի ազատ ու անկախ ապրելու իրավունքի ճանաչման լուսավոր առավոտը: Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, ազգովի զորակից լինենք ծանր փորձությունների միջով անցնող Հայաստան ու Արցախ մեր հայրենիքին, նեցուկ դառնանք կարիքի մեջ գտնվող մեր ազգակիցներին եւ գոտեպնդված հարության հույսով՝ նվիրական մեր երկիրը դարձնենք հրաշափառ հարության իրական վկայարան: Հայրապետիս հայցն է առ հարուցյալ Տերը, որ ազգս հայոց տեսնի իր կրած տառապանքների վարձքը եւ կերտի սրբազան հայրենիքի վերածնունդը:

Մաղթանաց այս աղոթքը Մեր շուրթերին եւ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» ավետիսով եղբայրական Մեր ողջույնն ենք բերում մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշալյանին, քույր Եկեղեցիների Պետերին՝ հայցելով հարուցյալ Փրկչի երկնառաք օրհնությունն ու օգնականությունը եւ գահակալության արեւշատ ու արդյունավոր տարիներ: Հայրապետական Մեր սերն ու բարեմաղթանքներն ենք հղում մեր Սուրբ Եկեղեցու ողջ հոգեւոր դասին եւ համայն հավատավոր Մեր ժողովրդին ի հայրենիս եւ ի սփյուռս:

Զատկական այս լուսապայծառ առավոտ Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված եւ խնդրում, որ մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոս, Իր հարության շնորհները հեղի մարդկության կյանքին, Իր Սուրբ Աջի ներքո պահպանի մեր հայրենիքը, աշխարհասփյուռ մեր ժողովրդին՝ պարգեւելով խաղաղություն, բարօրություն ու ապահովություն: Թող հարության կենարար խորհրդով զորացյալ ազգս հայոց իրականության առաջնորդի նախնյաց եւ մեր նվիրական իղձերն ու տեսիլքները՝ ի փառս մեր երկրի եւ ի հավետ պայծառություն մեր ժողովրդի: Տիրոջ սերը, խնամքը եւ ողորմությունը թող հովանի լինեն ազգիս ու հայրենյաց, այսօր եւ միշտ եւ հավիտյան. ամեն:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց.
Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի»:

Ավագ շաբաթվա արարողությունները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Ավագ հինգշաբթին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Ապրիլի 14-ին՝ Ավագ հինգշաբթի, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին հիշատակեց մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի Վերջին ընթրիքը եւ Սուրբ Հաղորդության խորհրդի հաստատումը: Այս առիթով վաղ առավոտյան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ս. Հովհաննես Մկրտիչ – Ս. Վարդան մատուռ-մկրտարանում կատարվեց Ապաշխարողաց կարգը:

Այնուհետեւ Մայր Աթոռի միաբանությունը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Մայր Աթոռի Սուրբ Տրդատի բաց խորանին կատարվեց Ոտնլվայի կարգը:

Հընթացս արարողության՝ սուրբգրային ընթերցումներից հետո, Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրհնեց խորանի վրա դրված ջուրն ու յուղը, ապա հոգեպարար շարականների երգակցության ներքո, Աստվածորդու օրինակով, լվաց եւ յուղով օծեց Մայր Աթոռի միաբաններ Եզնիկ արք. Պետրոսյանի, Աթանաս աբդ. Սարգսյանի, Անդրեգույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Ս. Գայանե վանքում մասնակցեց Միջօրեի ժամերգությանը եւ սբ Պատարագի արարողությանը: Պատարագիչն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վանորեից տեսուչ Արտակ եպս Տիգրանյանը: Պատարագի ընթացքում Քահանայից պատրաստության լսարանի տեսուչ Մինաս աբեղա Հախվերդյանն ընթերցեց սբ Բարսեղ Կեսարացու «Սուրբ Հաղորդությունից առաջ» ճառը:

Ոտնլվայի կարգը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Մայր Աթոռի Սուրբ Տրդատի բաց խորանին կատարվեց Ոտնլվայի կարգը:

Հընթացս արարողության՝ սուրբգրային ընթերցումներից հետո, Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրհնեց խորանի վրա դրված ջուրն ու յուղը, ապա հոգեպարար շարականների երգակցության ներքո, Աստվածորդու օրինակով, լվաց եւ յուղով օծեց Մայր Աթոռի միաբաններ Եզնիկ արք. Պետրոսյանի, Աթանաս աբդ. Սարգսյանի, Անդրեսրկ. Համամջյանցի, Գեւորգյան ճեմարանի Զ լսարանի սան Ավետիս սրկ. Ավետիսյանի, ՀՀ ՊՆ Ն զորամասի ժամկետային զինծառայողներ Ազատ Զարգարյանի, Նվեր Քոչարյանի, «Էօրնեկեան» հանրակրթական դպրոցի աշակերտներ Արման Դավթյանի, Մկրտիչ Զոհրաբյանի, Մայր Աթոռի «Քյուրքչյան» երեխաների աջակցության կենտրոնի սան Մայիս Մնացականյանի, ինչպես նաեւ այլ մանուկների՝ Միքայել Զոհրաբյանի, Նարեկ Համամջյանցի, Էմիլ Սեդրակյանի, Սպարտակ եւ Արթուր Փալիկյանների ոտքերը:



Արարողության ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը Պահպանիչ աղոթքով օրհնեց ներկա բարեպաշտ ժողովրդին, որից հետո օրհնված յուղը բաժանվեց հավատացյալներին:

Սուրբ Հարության Ճրագալույցի Պատարագը

Ապրիլի 16-ին՝ Ավագ շաբաթ օրը՝ երեկոյան, մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Սուրբ Հարության տոնի առիթով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, Ս. Գայանե վանքում մատուցվեց Ճրագալույցի Պատարագ: Պատարագիչն էր Նաթան արք. Հովհաննիսյանը: ➥ էջ 3

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

18 ապրիլի **ՀԲԸՄ-ի նախագահին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ տիար Պերճ Սեդրակյանին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀԲԸՄ-ի նախագահն անդրադարձան հայրենական եւ ազգային կյանքում առկա մարտահրավերներին եւ դրանց հաղթահարմանն ուղղված Հայոց Եկեղեցու եւ տարբեր ազգային հաստատությունների կողմից ձեռնարկվող կրթական, սոցիալական եւ զարգացման ծրագրերին:

Զրույցի ընթացքում խոսվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ ՀԲԸՄ-ի երկարամյա համագործակցության մասին, որն արդյունավորվել է բազում ազգօգուտ եւ եկեղեցաշեն ծրագրերով: Այս առիթով Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց ՀԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակյանին՝ բարձր գնահատելով միության կողմից դրսեւորվող ոգին ու գիտակցությունը եւ Մայր Աթոռին ու Հայոց Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերին ցուցաբերվող շարունակական զորակցությունը:

Ազգի առջեւ ծառացած արդի խնդիրներին հանդիման Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀԲԸՄ-ի նախագահը հատկապես կարեւորեցին երիտասարդ սերնդի կրթությանն ու հայեցի դաստիարակությանը, ազգային ինքնության պահպանությանն ու ազգային ոգու զորացմանն ուղղված ծրագրերի խթանումը:

Մասնավոր անդրադարձ կատարվեց Արցախի շուրջ մտահոգիչ զարգացումներին, Արցախի ազատ ու անկախ կյանքի դեմ ոտնձգություններին եւ արցախցիների կյանքում առկա դժվարություններին: Ընդգծվեց անհրաժեշտությունը համազգային հետեւողական ջանքերի գործադրման՝ ի նպաստ Արցախի մեր ժողովրդի իրավունքների պաշտպանության եւ խնդիրների հաղթահարման:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը եւ ՀԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակյանն արծարծեցին մի շարք հարցեր, որոնք վերաբերում են սփյուռքի համայնքային կյանքին, ձեւավորվող նոր համայնքներին, հայապահպանության խնդիրներին, ինչպես նաեւ երիտասարդության ազգային եւ հոգեւոր պատշաճ խնամատարության եւ սփյուռքի ազգային կառույցների եւ հաստատությունների զորացման կարեւորությանը: Կարեւոր նկատվեցին սփյուռքի ներուժի գնահատումը եւ համակարգված ծառայեցումը աշխարհասփյուռ համայնքների ազգային կյանքի աշխուժացմանը եւ հայրենական կյանքի առաջընթացին եւ բարօրությանը: Քննարկվեցին հնարավոր ուղիները, որոնցով երիտասարդությանը պետք է ներգրավել հայրենիքի հզորացմանն ուղղված ծրագրերում եւ նախաձեռնություններում:

19 ապրիլի **Վրաստանի գլխավոր դատախազին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վրաստանի գլխավոր դատախազ Իրակլի Շոթաձեի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի:

Հանդիպման սկզբում ՀՀ գլխավոր դատախազը Նորին Սրբությանը ներկայացրեց Հայաստանի եւ Վրաստանի գլխավոր դատախազությունների միջեւ հաստատված սերտ փոխգործակցությունը:

Ողջույնի իր խոսքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ արձանագրեց, որ վերջին տասնամյակներին երկու երկրների միջեւ գործակցությունն առավել խորանում եւ ընդլայնվում է՝ համահունչ երկու ժողովուրդների դարավոր բարեկամությանը: Նորին Սրբությունը նկատեց, որ հայ եւ վրաց ժողովուրդները դարեր շարունակ հարատեւել են քրիստոնեական հավատքի շնորհիվ եւ միմյանց զորավիգ լինելով՝ կարողացել են հաղթահարել բազմաթիվ դժվարություններ՝ պահպանելով իրենց ազգային ինքնությունը:

Շնորհավորելով վրաց ժողովրդին Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարության գալիք տոնի առիթով՝ Հայոց Հովվապետը մաղթեց, որ երկու ժողովուրդների համագործակցությունը լինի արդյունավետ եւ նպաստի երկու բարեկամ պետությունների զարգացմանը, առաջընթացին ու բարօր կյանքի կերտմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր եղբայրական ողջույններն ու բարեմաղթանքները փոխանցեց Համայն Վրաստանի Իլյա Բ Պատրիարքին:

Իր հերթին Վրաստանի գլխավոր դատախազ Իրակլի Շոթաձեն ընդգծեց, որ նման այցերը նպաստում են երկու երկրների պետական կառույցների փոխհարաբերությունների առավել սերտացմանը: Պարոն Շոթաձեն Վեհափառ Հայրապետին փոխանցեց նաեւ Վրաց Ուղղափառ Եկեղեցու հովվապետի ողջույնները: ➥ էջ 4

Ավագ շաբաթվա արարողությունները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում



➥ էջ 2

Մինչ Պատարագը կատարվեց Ճաշու երրորդ ժամերգությունը, ընթերցվեցին սուրբգրային տարբեր հատվածներ, որից հետո Մայր Աթոռի չորս միաբան սարկավագներ կարդացին Դանիել մարգարեի թուղթը:

Պատարագի ընթացքում Նաթան սրբազանն անդրադարձ կատարեց Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարության խորհրդին՝ ընդգծելով, որ այսօր մարդկության ամենասպասված ավետիսն է տրվում մեզ՝ ամենքիս հաստատելով մեր հավատքի մեջ:

«Հիսուս մեռելներից հարություն առավ եւ համայն աշխարհին հայտնեց՝ ես եմ կյանքը, ես եմ ճանապարհը հավիտենության: Դժոխք իջնելով՝ քանդեց այն եւ երկինք գնաց, որպեսզի բոլոր փրկվողներին Իր օրհնության ներքո պահի»,– ասաց Նաթան սրբազանը:

Ապա դիմելով ներկա հավատավոր ժողովրդին՝ հորդորեց լցվել Հարության լույսով եւ հավատքով, հեռու վանել իրենցից մեղքերը, ապրել մեր Տիրոջ նմանությամբ, ինչպես Նա ապրեց երկրային Իր կյանքի ընթացքում: Սրբազան հայրը նաեւ նկատեց. «Երբեմն մենք ուրիշի հերոսական արարքներով հպարտանում ենք, բայց ինքներս նույն կերպ չենք վարվում: Բարկանում ենք դիմացինի չարագործությունների վրա, սակայն ինքներս նույնն ենք կատարում: Միայն հիշեք, թե ինչպիսի չարիք գործեցին մի քանի օրվա ընթացքում մեր Փրկչի նկատմամբ՝ սկսյալ դատապարտելուց, դավաճանելուց, լքելուց եւ ուրանալուց: Ահավասիկ այս բոլոր չարիքները մարդիկ այսօր էլ գործում են՝ լինելով քրիստոնյա: Սիրելինե՛ր, մի՛ մոռացեք, որ Տերը գալու է նույն մարմնով եւ Հոր Փառքով՝ դատելու Իր արարածներին: Ուստի պատրաստվենք բարի գործերով, որպեսզի արժանանանք հարությանը եւ հավիտենական կյանքին»:

Սուրբ Պատարագի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձրացավ սուրբ Խորան եւ սուրբ Սեղանի կանթեղից վառեց Տեր Հիսուս Քրիստոսին խորհրդանշող կենսատու մոմը, որը բաշխվեց հավատացյալներին:

Պատարագի սրբազան արարողությունից հետո Մայր Աթոռի միաբանությունը մեկտեղվեց Վեհարանում, ուր, նախագահությամբ Հայոց Հովվապետի, կատարվեց Սուրբ Հարության Տնօրհնեք:

«Հարությունն այնտեղ է, որտեղ տերունավանդ սերն է հաղթանակում»

Ապրիլի 17-ին՝ Սուրբ Հարության բուն տոնին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում:

Հայրապետական սուրբ Պատարագին ներկա էին Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Մայր Աթոռի բարերարներ, Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պերճ Սեդրակյանը եւ ՀԲԸՄ-ի անդամներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների եւ միջազգային կազմակերպությունների ղեկավարներ ու ներկայացուցիչներ, քաղաքական-հասարակական գործիչներ եւ բազում ուխտավորներ:

Մայր եկեղեցու գավթում՝ ամպհովանու ներքո ամփոփված սբ Գրիգոր Լուսավորչի մասունքների առջեւ, երկրպագություն կատարելուց հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր օրհնությունը բաշխելով ներկա հավատացյալ ժողովրդին, եկեղեցականաց թափորով առաջնորդվեց դեպի սբ Խորան: Վեհափառ Հայրապետին որպես առընթերականեր սպասավորում էին Մայր Աթոռի լուսարարապետ Մուշեղ եպս Բաբայանը եւ ԵՊՀ-ի աստվածաբանության ֆակուլտետի դեկան ու Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ Անուշավան եպս Ժամկոչյանը:



Սբ Պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը համայն հայությանը հղեց հայրապետական իր պատգամը՝ փոխանցելով «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» հրեշտակաբարբառ ավետիսը (տես էջ 1):

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

➥ էջ 3

21 ապրիլի

Հորդանանի Հաշիմյան թագավորության Սենատի պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հորդանանի Հաշիմյան թագավորության Սենատի Հորդանան – Եվրոպական խորհրդարան բարեկամության ասոցիացիայի նախագահ Խալդուն Հինայի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ Հայաստան–Հորդանան բարեկամական խմբի ղեկավար Արթուր Դավթյանի:

Հանդիպմանը Նորին Սրբությունը, ողջունելով հյուրերի այցը Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, հույս հայտնեց, որ այն առավել կզորացնի երկու խորհրդարանների հարաբերությունները՝ մեծապես նպաստելով երկրների միջեւ հետագա սերտ գործակցությանը:

Վեհափառ Հայրապետը, վերհիշելով իր այցը Հորդանան, ինչպես նաեւ հանդիպումները Հորդանանի թագավորի հետ Հորդանանում եւ Սուրբ Էջմիածնում, գոհունակությամբ հաստատեց հայ համայնքի նկատմամբ Հորդանանի իշխանությունների կողմից ցուցաբերվող հոգատար վերաբերմունքը՝ որպես ձեւավորված դարավոր բարեկամական հարաբերությունների լավագույն դրսեւորում: Հայոց Հովվապետն արձանագրեց նաեւ, որ Հայոց ցեղասպանությունը վերապրած մեր ժողովրդի զավակները կարողացել են ապաստան գտնել Հորդանանում եւ կազմակերպել իրենց ազգային-հոգեւոր կյանքը՝ օգտակար ներդրում բերելով երկրի առաջընթացին:

Իր հերթին պարոն Խալդուն Հինան Վեհափառ Հայրապետին փոխանցեց Հորդանանի ժողովրդի եւ հորդանանահայության ողջույնները:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ արցախյան 44-օրյա պատերազմին եւ դեռեւս չհաղթահարված հետեւանքներին, Արցախի ժողովրդի խաղաղ ու անկախ կյանքի դեմ շարունակվող ոտնձգություններին: Խոսելով Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված տարածքներում հայկական հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանության խնդիրների, սրբավայրերի, խաչքարերի, շիրմաքարերի պղծման եւ ոչնչացման դեպքերի մասին՝ Նորին Սրբությունը նկատեց, որ Ադրբեջանի որդեգրած այս քաղաքականությունը հարիր չէ իսլամի ոգուն, եւ հույս հայտնեց, որ այն իսլամական աշխարհի կողմից կարժանանա խիստ դատապարտության:

Հորդանանի Հաշիմյան թագավորության Սենատի Հորդանան – Եվրոպական խորհրդարան բարեկամության ասոցիացիայի նախագահը վերահաստատեց, որ Հորդանանը կարեւորում է հակամատությունների խաղաղ կարգավորումը եւ ողջունում դրան ուղղված ջանքերը:

25 ապրիլի

Սիրիա–Հայաստան բարեկամական խմբի պատվիրակությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սիրիայի Արաբական Հանրապետության խորհրդարանի Սիրիա–Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Լյուսի Իսկանյանի գլխավորած պատվիրակությանը:

Նորին Սրբությունը, ողջունելով հյուրերին, ընդգծեց, որ վերջիններիս այցը Հայաստան Հայոց ցեղասպանության ոգեկոչման շրջանականներում լավագույնս վկայում է երկու ժողովուրդների բարեկամական եւ ջերմ հարաբերությունների մասին, որոնք ունեն դարավոր պատմություն:

Հանդիպմանը Հայոց Հովվապետը գոհունակությամբ արձանագրեց, որ Հայոց ցեղասպանությունը վերապրած հայ ժողովրդի զավակները կարողացել են ապաստան գտնել Սիրիայում եւ կազմակերպել իրենց ազգային-հոգեւոր կյանքը՝ օգտակար ներդրում բերելով երկրի հասարակական կյանքի տարբեր ոլորտների առաջընթացին: Այս առիթով Վեհափառ Հայրապետը, վերհիշելով իր այցերը Սիրիա, ինչպես նաեւ հանդիպումները Սիրիայի նախագահի հետ Սիրիայում եւ Սուրբ Էջմիածնում, ուրախությամբ հաստատեց հայ համայնքի նկատմամբ Սիրիայի իշխանությունների կողմից ցուցաբերվող հոգատար վերաբերմունքը: Նորին Սրբությունն իր երախտագիտությունն ու գնահատանքը հայտնեց Սիրիայի խորհրդարանին Հայոց ցեղասպանությունը ճանաչելու եւ դատապարտելու համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւոր նկատեց նաեւ հայ-սիրիական կապերի եւ փոխգործակցության սերտացման ու զորացման գործում Հայ Եկեղեցու համայնքների դերակատարությունը:

Իր հերթին տիկին Լյուսի Իսկանյանը, Նորին Սրբությանը ներկայացնելով պատվիրակության անդամներին, հաստատեց, որ Սիրիայի իշխանությունները շարունակում են իրենց աջակցությունը բերել սիրիահայությանը՝ խրախուսելով վերջինիս ներգրավվածությունը երկրի քաղաքական, տնտեսական եւ մշակութային գործընթացներին:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված տարածքներում հայկական հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանության խնդիրների, սրբավայրերի ու խաչքարերի պղծման եւ ոչնչացման դեպքերին: Խոսելով Հայաստանի եւ Արցախի ժողովրդի խաղաղ ու անկախ ապրելու իրավունքի դեմ Ադրբեջանի կողմից շարունակվող ոտնձգությունների եւ հետպատերազմյան մարտահրավերների մասին՝ Նորին Սրբությունը վստահեցրեց, որ հայ ժողովուրդն իր մեջ ուժ կգտնի հաղթահարելու առկա դժվարությունները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր

Ապրիլի 24-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ ոգեկոչելու Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակը:

Ծաղկեպսակի զետեղումից հետո հուշահամալիրում՝ անմար կրակի առջեւ, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսական կարգ:

Օրվա առիթով Ծիծեռնակաբերդի հուշահամալիր էր բերվել նաեւ Հայոց ցեղասպանության սրբոց նահատակաց մասունքարանը:

Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների ոգեկոչման արարողությունները Մայր Աթոռ Ս. Էջմիածնում



Ապրիլի 24-ին, Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակի օրվա առիթով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, սուրբ Պատարագի արարողությանը մասնակցեց Ս. Գայանե վանքում: Այս օրը հավատացյալների խոնարհումի համար դուրս էր բերվել Հայոց ցեղասպանության սրբոց նահատակաց մասունքարանը:

➥ էջ 5

Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների ոգեկոչման արարողությունները Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

↩ էջ 4

Պատարագիչն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը:

Պատարագի ընթացքում Արշակ սրբազանը, անդրադարձ կատարելով օրվա խորհրդին եւ 20-րդ դարի սկզբի պատմական իրադարձություններին ու Հայոց ցեղասպանությանը, ի մասնավորի նշեց. «Հայոց սոսկալի ջարդերից անցել է ավելի քան հարյուր տարի. Ցավի, տառապանքի, նվաստացման, հուսախաբությունների, բայց նաեւ ամոքման ու վերականգման տարիներ: Սոսկալի ջարդերի սահմռկեցուցիչ տեսարանների առջեւ համրացած աշխարհը, սակայն, տակավին համընդհանուր ու համարժեք դատապարտության չի արժանացրել ցեղասպանության հանցագործությունը:

Ցեղասպանությունը մեր ժողովրդի նկատմամբ շարունակվում է նաեւ այսօր եւ այնքան ժամանակ, քանի դեռ չեն վերացել մեր ազգին հասցված հոգեւոր, հոգեբանական, բարոյական ու նյութական ահռելի կորուստների հետեւանքները»:

Սրբազան հայրը նկատեց, որ Հայոց ցեղասպանության հանդուրժումը, դրա կոծկումը կամ ժխտումը համարժեք դարձան նոր ցեղասպանությունների խրախուսման ու քաջալերման. «Հանդուրժել մեղքը նշանակում է ոչ միայն դառնալ հանցակից, այլեւ ճանաչել դրա օրինաչափությունը, նվիրագործել մեղսագործությունը, հանցագործությունը դարձնել կենսակերպ եւ հարբերությունների պարզաբանման գործիք»:

Անդրադառնալով ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակին՝ սրբազան այրն ընդգծեց. «Մեր նահատակները մեր ուժն են եւ մեր զորությունը: Այնքան ժամանակ, որքան կպահպանենք հավատարմությունը մեր սուրբ նահատակներին, այնքան ժամանակ, քանի դեռ կպայքարենք ցեղասպանության աղետալի հետեւանքների վերացման համար, ահա ճիշտ այդքան ժամանակ մենք կշարունակենք մնալ հավատարիմ մեր ինքնությանը եւ արժանի ժառանգը մեր նահատակված հայրերի: Նահատակների հիշատակի նվիրական այս օրը սաղմոսերգուի հետեւողությամբ ուխտերգ է դառնում համազգային մեր պոռթկումը՝ «Ով սուրբ նահատակներ, եթե մոռանանք ձեզ, թող չորանան մեր ձեռքերը, եւ եթե չհիշենք ձեզ, թող մեր քիմքերին մեխվեն մեր լեզուները»»:

Իր խոսքի ավարտին պատարագիչ սրբազանը, դիմելով ներկա հավատացյալներին, պատգամեց. «Ցեղասպանության սուրբ նահատակների նվիրական հիշատակի առջեւ ուխտի այս օրը մենք պարտք ունենք մեր նախնիների, մեր սերունդների եւ Աստծու առջեւ՝ հաղթահարելու սիրո ու ներողամտության ճգնաժամը ներազգային մեր կյանքում: Լոկ կեղծիք են ու խաբեություն այլոց սիրելու մեր հավաստիացումները, երբ չունենք սեր ինքներս մեր, մեր ազգի զավակների ու մեր եղբայրների նկատմամբ: Նվիրական հիշատակի այս առավոտ իմ հոգու խորքերից Քրիստոսի անունով դիմում եմ ձեզ՝ թափանցելու համար ձեր հոգու խորքերը. ամուր պահենք մեր հայկական ինքնությունը, չտրվենք քաղաքական ու գաղափարական այլածին հոսանքներին, ամեն ինչից առաջ եւ ամեն ինչից վեր մաքուր պահենք հայրենիքի սրբազան տարածքը օտարամուտ բարքերից ու կենսակերպից»:

Սուրբ Պատարագի ավարտին եկեղեցականների թափորը, կրելով սուրբ նահատակների մասունքարանը, ուղղվեց դեպի Մայր տաճարի շրջափակ, ուր Աղոթքի եւ ուխտի խաչքարի առջեւ, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսական կարգ:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունը եւ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության գնդերեցներն այցելեցին Եռաբլուր

Ապրիլի 18-ին, ննջեցյալների հիշատակության օրվա առիթով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունը եւ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության գնդերեցներն այցելեցին Եռաբլուր զինվորական պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու հանուն հայրենիքի իրենց կյանքն ընծայաբերած հայորդիների հիշատակին:

Պանթեոնում կատարվեց Հոգեհանգստյան կարգ: Հոգեւորականաց դասն աղոթք բարձրացրեց առ Աստված՝ քաջորդիների հոգիների խաղաղության համար: Եկեղեցականներն առանձնաբար այցելեցին նաեւ ազգի հերոս զավակների շիրիմներին՝ բերելով իրենց խոնարհումն ու աղոթքը:

Հայտարարություն

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանը (աստվածաբանական համալսարան) հայտարարում է 2022–2023 ուս. տարվա ընդունելություն:

Գեւորգյան հոգեւոր ճեմարան եւ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոց կարող են ընդունվել ՀՀ եւ այլ երկրների մինչեւ 25 տարեկան արական սեռի այն քաղաքացիները, որոնք ունեն միջնակարգ (կամ ավելի բարձր) կրթություն եւ զավակն են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու: Դիմել կարող են նաեւ Հայաստանի զինված ուժերում ծառայությունն ավարտած, զորացրված քաղաքացիները:

Գեւորգյան հոգեւոր Ճեմարանում 2022–2023 ուս. տարվա ընդունելությունը կանցկացվի հետեւյալ առարկաների քննությամբ:

- Հայոց լեզու (գրավոր),
- Հայ գրականություն (բանավոր),
- Հայոց պատմություն (բանավոր):

Դիմորդները ճեմարանի տեսչության հետ ճանաչողական բնույթի զրույց կունենան հետեւյալ նյութերի շուրջ.

- Սուրբ Գրքի իմացություն,
- Հայ Եկեղեցու պատմության մասին գիտելիքներ,
- եկեղեցական փորձառություն,
- հայ գրականություն,
- ինքնաարտահայտվելու կարողություն,
- երաժշտություն (երգեցողություն, լսողություն, ռիթմի զգացողություն),
- օտար լեզու (անգլերեն, ռուսերեն):

Ընդունելության համար դիմորդները պետք է ներկայացնեն հետեւյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

– դիմում ճեմարանի տեսչի անունով (լրացվում է տեղում),
– միջնակարգ (կամ ավելի բարձր) կրթության վկայական (բնօրինակ),
– զինվորական դրության մասին փաստաթուղթ (բնօրինակ),
– տեղեկանք թեմի առաջնորդից կամ շրջանի հովվից,
– բժշկական վավերացման տեղեկանք,
– բնութագիր (դպրոցի տնօրենից),
– տեղեկանք բնակավայրից,
– մկրտության վկայական,
– ինքնակենսագրություն,
– անձնագրի պատճեն,
– 2 լուսանկար (3×4):

Դիմումներն ընդունվում են ապրիլի 20-ից մինչեւ օգոստոսի 20-ը՝ շաբաթվա բոլոր օրերին՝ ժամը 10:00–15:00:

Հասցե՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Գեւորգյան հոգեւոր ճեմարան:
Հեռախոս՝ (+374 10) 517–321, (+374 98) 085403:
Էլ. հասցե՝ gevorgianseminary@gmail.com:

Համաստեղի «Սպիտակ ձիաւորը» վեպը

Սկիզբը՝ թիվ 7

Համաստեղը ոչ թե դրսից է նայում իր վիպական աշխարհին, այլ նրա ձայնը գալիս է ներսից՝ երկրի սարերից ու ձորերից, հողի ընդերքից ու եղեգան փողից: Աչքի առաջ հայոց աշխարհն է, թուրքերի եւ քրդերի կողմից հայկական գյուղերի թալանն է, ամենօրյա սպանություններ, բռնություններ, ազգային ճնշումներ: Ավերված բերդեր են ու խախտված ճակատագրեր:

Սկիզբը Բերդակ գյուղն է՝ ազատագրական խմորումների բերդ-ամրոցի նշանակությամբ: Ռ. Տեր-Մինասյանը գրում է. «Այդտեղ մեր բոյնն է եղած, եւ ամէն քարը մէկ կռիւ տուած, այդտեղ 7 թե 8 կռիւ է տեսածս» (*նշվ. հրատ., հ. 5, էջ 82*): Հայտնի է, որ 1904-ի ամռանը գյուղում տեղի է ունեցել ազատագրական ուժերի խորհրդակցություն, որին մասնակցել է նաեւ Անդրանիկը: Ըստ վիպական այցեքարտի՝ «Բերդակը ուրիշ գիւղերու շատ չէր նմաներ: Բնակիչները կ'ապրեին առեւտուրով ու արհեստով: Շատերը շերամաբոյծ էին: Վայրը անտառոտ էր, կը պահէին այծեր: Գորգագործութիւնով զբաղուողներ ալ կային: Գիւղն ուներ իր պազարը, ուր երբեմն հեռու տեղերէ աղ ու օճառ բերող ուղտեր կը չոքեին: Շրջակա գիւղերէն քիւրտ կիներ իրենց գլուխներուն վրայ դրած կը բերէին սեր, մածուն, կարագ, ոչխարի բուրդ» (էջ 10): Հարեւան գյուղերում զբաղվում էին նաեւ ծխախոտի մշակությամբ: Այծից բացի՝ պահում էին սագ, հավ ու հնդկահավ: Շրջակա լեռներում անտառներ էին, գյուղամիջյան ճանապարհներ, հնօրյա բերդերի ու եկեղեցիների ավերակներ՝ անցած փառքի հիշատակներով:

Ահա Բերդակում ծնվում ու կյանք է մտնում վեպի գլխավոր հերոսը՝ Մարտիկը՝ ապագա Սպիտակ ձիավորը: Նրա հայրն ու մայրը նորապսակներ են եղել, երբ տան մերձակա եկեղեցու պատը նորոգող վարպետ Սարգիսը վերեւից տեսել է նորահարս Մարիամին, նրա խելքը գողացել է, եւ կենակցել են: Գյուղի աչքից ոչինչ չի վրիպում, դրանից հետո նորահարսի անվանն ուղեկցում են վարկաբեկիչ զրույցներ: Ծնվում է Մարտիկը՝ ամեն ինչով նման եկեղեցու պատշար վարպետին: Ամուսնու՝ Ստեփանի «Ինչպ՞ես եղավ» հարցին, ներվելու հույսով, կինն անկեղծ պատասխան է տալիս: Երկու օր անց Ստեփանը լքում է կնո՛ջն էլ, գյո՛ւղն էլ ու հեռանում՝ այլեւս չհիշվելով վեպում:

Մարիամի կապակցությամբ հեղինակը գրում է. «Գիւղացիներն իրենց լեզուով անոր գերեզմանը փորեցին ու պատանքով իջեցուցին հող» (էջ 10): Նա հալումաշ է լինում եւ ավանդում հոգին:

Նորածինը մնում է մինուճար հորաքրոջ՝ Մաքոյի խնամքին, որը մի այծ ուներ եւ երկու ծիրանի ծառ: Ահա հերոսի այսպիսի ծնունդ՝ նորոգվող եկեղեցի ու Մարիամ, որ խորհրդանշաններ են, եւ նորածին, ով, ինչպես էպոսի հերոս, ոչ թե ամսով, այլ օրով է մեծանում: Մարտիկը յոթ տարեկանում հորաքրոջ այծն է արածեցնում, հետո՝ արդեն գյուղի հոտը:

Տղայի դաստիարակությամբ զբաղվում եւ նրան ոգի է ներշնչում համագյուղացի ջուլհակ Պետոն. գրել-կարդալ է սովորեցնում եւ ընթերցում Նարեկ: Մեծանում է Հավլունի թուրը գտնելու երազանքով, Պղնձե քաղաքի հեքիաթներով, երեւակայությունը շարժում է ավազակապետ Հաճի Մուսան, որը շուտով մտնելու էր գործողությունների մեջ: Խոսք ու զրույցի մեջ առկայծում են ֆիդայիների կերպարները, որոնց զորավոր կանչին էլ պետք է միանար Մարտիկը: Ֆիդայիների եւ գյուղի մեջ կապ կար:

Հերոսի դաստիարակը նաեւ բնությունն էր. «Մարտիկ կը մոռնար իր ու Նարեկի բառերը ու յաճախ լուռ կը դառնար բնութեան մեկ ուժեղ ամբողջութիւնը» (էջ 22): Այսպես հովվություն անելով, հայոց պատմության ու հայոց բնաշխարհի դասերը սերտելով՝ Մարտիկը դառնում է 17 տարեկան, որին իր հոտն է վստահում անգամ գյուղի հարուստ երեսփոխը: Տղայի համբավն ավելի է մեծանում, երբ ձեռքի գավազանով սպանում է հսկայական մի գայլ, խեղդամահ անում եւ մորթը ուսին գցած՝ մտնում գյուղ: Սա արդեն իսկ դյուցազներգություն է միապաղաղ իրականության մեջ: Էպոսում առյուծ պատռող-ձեւող Առյուծ Միհրն էր, այստեղ՝ գայլ խեղդող Մարտիկը: Նա ծնվել էր ֆիդայի դառնալու համար, իր լավագույն որդիներից դա՛ էր երկրի պահանջը:

Այս հեքիաթի մեջ ծնվում է սերը: Անտառներով, հովիտներով, բացատներով, սարերով ու ձորերով իր հոտն արածեցնող Մարտիկը հանդիպում է քուրդ հովվուհի Զեյնապին: Սա վեպի սիրային ճյուղի առանցքային կերպարն է: Զեյնապը մոր կողմից հայ է: Հայրը բռնի է տիրացել մորը, որն էլ հարմար մի պահի վրեժ է լուծել նրանից եւ դաշույնը խրել սիրտն ու սպանել: Մայրը հեռացել, Բիթլիսի կողմերում նոր ընտանիք է կազմել, իսկ աղջիկ երեխան մնացել է հորեղբոր խնամքին: Քրդացած գեղեցկուհի Զեյնապը գիտի, որ ինքը մոր կողմից հայ է, նա արդեն մերժել է Հազարան լեռան չոբանի ամուսնության առաջարկը: Մարտիկն ու Զեյնապը միասին հովվություն են անում, տղան աղջկան ազատում է չկայացած փեսացուի հետապնդումներից, հավաքում ու նրան է տալիս կտրված մանյակի շաղ եկած հուլունքները: Ծանոթությունը շատ արագ վերածվում է մտերմության, մտերմությունը՝ սիրո. «Մարտիկ ու Զեյնապ գիրկ գրկի շաբաթներ անցուցին...» (էջ 36): Մարտիկն աղջկա համար սրինգ է նվագում եւ երջանկացնում նրան:

Նրանց, ասես անտառների Պան, հսկում է մի քուրդ ծերունի, որ կանկառ (մարեմխոտ) էր հավաքում: Իսկ անտառը լի էր բարիքներով, որ նաեւ նրանց պահապանն էր...

Չկայացած փեսացուի կատարած գողության դիմաց Մարտիկը փախցնում է նրա ձին եւ, սար ու ձոր չափելով, փորձում աղջկա համար եղնիկի ձագ որսալ: Դարուփոսերի մեջ ձին ծառս է լինում, Մարտիկն ընկնում է ու վնասվում: Հովվերգությունն ավարտվում է: Մինչ Մարտիկն ապաքինվում է եւ նետվում դեպի Զեյնապը, Հաճի Մուսան տիրանում է նրան եւ դարձնում իր կինը: Հաճի Մուսան կանանցով լեցուն ուղտի կաշվից նախշազարդված գույնզգույն վրաններ է ունեցել՝ հույներ, թրքուհիներ, պարսկուհիներ, արաբուհիներ, տարաշխարհիկ այլ գեղեցկուհիներ, որոնք իրենց անուշաբույր մարմիններով մերկանդամ երգել ու պարել են նրա համար, զվարճացրել պարտություն չտեսած դաժան ավազակապետին... Բայց այս մեկն ուրիշ էր, վեր՝ սոսկ իգության հրապույրից, եւ անունը՝ սեր:

Զեյնապի հետքերով Մարտիկը հայտնվում է Հաճի Մուսայի գյուղում, դառնում նրա դարպասի պատը նորոգող որմնադիր վարպետի՝ խալֆա Մակարի օգնականը: Սիրահարները բոլորից գաղտնի գտնում են իրար, բայց արդեն անհասանելի են ու անմատչելի: Մեջտեղում Հաճի Մուսան է՝ իր ուժով, հեղինակությամբ ու դիրքով: Երկուսն էլ հիշում էին սիրո երդումները. «Մենք նորէն պիտի գտնենք իրար...» (էջ 77): ➥ *էջ 8*

Երկու լուսանկար միեւնույն դիտակետից.

Գալֆայան որբանոցի ուխտյալ միանձնուհիները

Ներկայացված երկու լուսանկարները, թեեւ առկա տարբերություններին, երբեմն կարող են նաեւ շփոթեցնել: Առաջինում չորս միանձնուհի են՝ սարկավագի ուրարներով ու լանջախաչերով, երկրորդում՝ հինգ միանձնուհի՝ կրկին ուրարներով եւ լանջախաչերով: Երկու լուսանկարներն էլ արված են նույն վայրում՝ միեւնույն դիտակետից:

Ո՞վքեր են այս միանձնուհիները: Ե՞րբ եւ որտե՞ղ են արվել այս լուսանկարները:

Առաջին լուսանկարն ընդգրկված է նաեւ Հայոց ցեղասպանության տարելիցի առիթով հրապարակված մի խտասկավառակում՝ վերցված ֆրանսահայ հեղինակ Ռայմոնդ Գեւորգյանի «Հայերն Օսմանյան կայսրությունում ցեղասպանության նախօրեին» («Les Arméniens dans l'Empire ottoman à la veille du génocide») գրքից, որտեղ միանձնուհիները ներկայացված են իբրեւ կաթոլիկ քույրեր:

Սակայն այս թյուրըմբռնումն ամբողջովին փարատում է երկրորդ լուսանկարը՝ հինգ միանձնուհիների պատկերով: Այն հանդիպում է Կ. Պոլսի աղջիկների Գալֆայան որբանոցի 68-ամյա պատմությանը նվիրված գրքույկում: 1935 թվականի այս հրատարակությունը վկայում է, որ բոլոր այս միանձնուհիները Հայ եկեղեցու կույսեր են՝ Գալֆայանի որբանոցի քույրերից:

Ու թեեւ երկու լուսանկարներում էլ կույսերի անունները նշված չեն, սակայն նրանց կարելի է ճանաչել այլ լուսանկարներից: Իսկ լուսանկարներն արվել են Գալֆայան որբանոցում՝ որբանոցի այսօր արդեն հիմնովին ավերված մատրան առջեւ:

Սակայն ուշագրավը, անշուշտ, միանձնուհիների հանդերձանքն է: Ե՞րբ եւ ինչպե՞ս է նրանց շնորհվել ուրար եւ լանջախաչ կրելու իրավունք:

Առաջին լուսանկարը, ըստ ամենայնի, արվել է 1918 թվականին: Այս տարեթիվը նշանակալի է որբանոցի պատմության մեջ: Այս տարեթվին է օծվել որբանոցի աղոթարանը, իսկ որբանոցի ուխտյալ քույրերին առաջին անգամ տրվել նաեւ դպրության աստիճան ու որբանոցի մատուռում պատարագի ժամանակ խնկարկելու եւ Ավետարան կարդալու իրավունք:

Այս մասին որբանոցի Աղավնի մայրապետը 1914–1919 թթ. գործունեության զեկուցագրում գրում է. *«1918 Փետր. 14-ին՝ Տեառնընդառաջի օրը Պատրիարքական Տեղապահ Գաբրիէլ Արքեպիսկոպոս Ճէվահիրճեան օծեց հաստատութեանս պարտէզին մէջ կառուցուած աղոթարանը, ուր թաղուած է հիմնադիր Սրբուհի Մայրապետ, արտօնելով մեզ հոն պատարագ մատուցանել: Ասիկա կրկնապէս մխիթարական եղաւ խասգիւղի ժողովրդեան համար էլ, մանաւանդ որ այդ թուականներուն Ս. Ստեփանոս եկեղեցին գրաւուած եւ աւերուած, պաշտամունքէ զուրկ մնացած էր: Այս առթիւ Ճէվահիրճեան Սրբազան մեզ ու որբուհիներուն մխիթարութիւն մը ըլլալու համար եկեղեցական սպասարկութեան եւ ուրարակրութեան աստիճան տուաւ Որբանոցին հանգուցեալ մօր եւ երեք քույրերուն, որոնք նաեւ հաստատութեանս մէջ իրենց 16 տարուան աշխատութեան համար ալ օրուան Սահակ Կաթողիկոս-Պատրիարքին կողմէ լանջախաչ կրելու արտոնութեամբ վարձատրուեցան»*:

Սա աննախադեպ երեւույթ էր որբանոցում, երբ քույրերին շնորհվում էր եկեղեցական աստիճան: Կարծիք կա, որ պատրիարքական տեղապահն օրինակ էր ունեցել Թիֆլիսի Սբ Ստեփաննոս եւ Նոր Ջուղայի Սբ Կատարինե կուսանոցները, որի միանձնուհիները, իբրեւ սարկավագուհիներ, երկար տարի ի վեր մասնակցում էին կուսանոցների եկեղեցիներում մատուցվող սբ Պատարագին: ➥ *էջ 7*

Հերոսների դրամատիկ հոգեվիճակները «Գեւորգ Մարզպետունի» վեպում

Սկիզբը՝ թիվ 6

Երբեմնի հզոր արքան դառնում է թուլամորթ, իր կրքերի գերի, ստոր մի արարած, որը կալանավորում է Սեւադայի մտերմին՝ Սյունյաց Վասակ իշխանին՝ հավատացնելով, որ վերջինս սիրային հարաբերությունների մեջ է թագուհու հետ: Նա նույնիսկ այդ ակնարկն անամոթաբար շպրտում է հենց Վասակի դեմքին. «Մարիամ իշխանուհին (*Վասակի կինը*) գանգատվում է միշտ, թե դու զբոսասեր չես եւ թե երբեք չես ընկերանում իրեն զբոսաքների ժամանակ: Հայտնիր իմ կողմից իշխանուհուն, որ դրա պատճառը ոչ թե զբոսասիրությունն է, այլ այն, որ ինքն ավելի գեղեցիկ չէ թագուհուց» (էջ 115):

Աշոտ Երկաթի կերպարի դրաման ավելի ակնհայտ է դառնում այն ժամանակ, երբ վեպում արդեն հանդես է գալիս հենց ինքը՝ արքան, որը կորցնում է իր ուժն ու հավատը, ընկճվում, ընկնում հոգեկան տառապանքի մեջ, երբ եգերացիները դավաճանում են իրեն Ցլիկ Ամրամի ապստամբների դեմ կռվի ժամանակ: Նա ստիպված հեռանում է բանակից՝ քաջ գիտակցելով, որ Ցլիկ Ամրամն իրականում միայն իր արյունն է ցանկանում: Արքան դեռեւս պահում է ոչ միայն սթափ խորհող ու գնահատող, այլեւ տաքարյուն ու քաջ գործչի արժանապատվության զգացումը, գերադասում է մահանալ, քան հանձնվել թշնամուն. «Աշոտ թագավորը շատ այսպիսի անհաջողությունների է հանդիպել, շատ անգամ է թշնամիներով ու դավաճաններով պաշարվել, բայց երբեք եւ ոչ մի վայրկյան չէ մտածել, որ պիտի անձնատուր լինի թշնամուն» (էջ 174): Հենց սա էլ դառնում է նրա մեծ դրամայի սկիզբը:

Հուսահատ արքան գերադասում է փակվել Կաքավաբերդում, հետո՝ Սեւանում, քանի որ համարում էր, որ Ցլիկ Ամրամից փախչելն ամոթահար է արել իրեն, գցել իր՝ երբեմնի հզոր արքայի ունեցած վարկը իր հայրենակիցների աչքում, հողին հավասարեցրել իր հպարտությունը. «Այսուհետեւ ես ոչ սուր կհանեմ, ոչ գահույք կբարձրանամ, իմ իշխաններն ամոթապարտ կացուցին ինձ աշխարհի առաջ, թող նրանք ուրեմն պատասխանատու լինին իմ երկրի ավերման» (էջ 209):

Սեդայի բերանով Մուրացանը հայտնում է այն գաղափարը, որ, որքան էլ որ ինքն անողոք է արքայի այդ թուլության նկատմամբ, այնուամենայնիվ, դրա մեջ տեսնում է մարդկային նուրբ զգացմունք, որը, ցավոք, թույլ չի տալիս մարդուն սթափ գնահատել իրավիճակն ու ճիշտ որոշումներ կայացնել. «Սիրո շղթաները շատ անգամ ամենածանր կապանքներն են, որոնք արգելում են տղամարդուն փառքի ասպարեզում շահատակելու»: Գեւորգ Մարզպետունին տեսնելով, թե ինչ ավերածություններ ու կոտորածներ են տեղի ունենում երկրում, ցավով խոստովանում է. «Եվ այս բոլորի պատճառը մի ապօրինի քայլ, ողջախոհության դեմ մի հանցանք…» (էջ 98):

Աշոտ Երկաթը տառապող եւ հոգեկան հարուստ աշխարհ ունեցող կերպար է, որը տանջվում է խղճի խայթից, անցյալի ծանր արարքներից, իր մտերիմներին եւ սիրելիներին հասցրած վիրավորանքներից, ի վերջո այն գիտակցությունից, որ մի ողջ ժողովուրդ կործանման եզրին է գտնվում իր թուլության պատճառով, որ ինքն իրականում այն հզոր առաջնորդը չէր, որը կարող էր անձնական զգացմունքները ստորադասել հասարակական պարտքին: Նա գիտակցում է, որ իր ճակատագրական սխալը անդառնալի հետեւանքներ ունեցավ. թագուհին տանջվում է ամուսնու դավաճանությունն իմանալուց հետո, Սեւադային ու նրա Գրիգոր որդուն իր հրամանով կուրացրել են, Ցլիկ Ամրամն Ասպրամին փակել է մենախցում, իսկ թշնամին, օգտվելով առիթից, ավերածություններ անում երկրում: Միգուցե մեղքի այս զգացումը հնարավոր լիներ թեթեւացնել, եթե արքան կարողանար իր սիրտը բացել որեւէ մեկի առաջ, բայց արքայական հպարտությունը թույլ չէր տալիս. «Նա հպարտ էր եւ անընկճելի: Նա կարող էր կործանվել, բայց կուրանա՞լ՝ երբեք. այդ պատճառով յուր երկար մտածություններից հետո նա եկավ դարձյալ այն որոշման, որի վրա էր եւ մտածություններից առաջ՝ չխոսել գաղտնիքների մասին ոչինչ եւ աներկյուղ դիմավորել յուր ճակատագրին…» (էջ 159): Հպարտության այս զգացումն էր, որը հաճախ էր արքային ստիպում արհամարհել սեփական ես-ը, քանի որ քաջ գիտակցում էր, որ արժանի չէ այլեւս նախկին վերաբերմունքին: «Ես հպարտ եմ, ես չեմ կարող տանել այն բարիքը, որ հատուցվում է ինձ իմ գործած չարության համար»,– խոստովանում է արքան Սահականույշի հետ զրույցի ժամանակ (էջ 280):

Ավելի մեծ դժբախտություն չկա, քան դժբախտության մեջ հիշել երջանիկ օրերը. Սեւանում փակված արքան հիշում է իր երջանիկ տարիները, երբ ամեն կռվից հետո սուրը փառքով պատյանն էր դնում, երբ իր անունը սարսափ էր ներշնչում թշնամուն, երբ բոլոր նախարարներն ու հասարակ մարդիկ համախմբած էին արքայի շուրջ, սակայն այս ամենն ի չիք դարձավ իր մի թուլության պատճառով. «Ինչո՞ւ, ինչո՞ւ հասա ես նվաստության այս աստիճանին…» (էջ 271): Երբեմնի հզոր արքան, որի անունը սարսափ էր ներշնչում թշնամիներին, այժմ իրեն զգում էր անպաշտպան ու թույլ: «Աշոտ Երկաթի կամքը… Օ՜, նա այժմ ավելի անզոր է, քան հովտի եղեգը, որին տատանում է նույնիսկ հովի շունչը»,– խոստովանում է արքան Սահականույշի հետ զրույցի ժամանակ (էջ 277): Մոլորությունը մարդկային է, սխալը՝ ներման արժանի, եւ թագուհին փորձում է խաղաղել թագավորի խռովքը, բայց Աշոտ Երկաթն իր մեղքից տուժողներից առաջինը համարում է Սահականույշին, առավել եւս «նախատինք է այն, որ իմ անհավատարմությունը դու այդքան անսահման սիրով ես փոխարինում» (էջ 310): ➥ *էջ 8*

Երկու լուսանկար միեւնույն դիտակետից.

Գալֆայան որբանոցի ուխտյալ միանձնուհիները

➥ *էջ 6*

Հայտնի են նաեւ եկեղեցական աստիճան ստացած բոլոր չորս կույսերի անունները՝ որբանոցի մայրապետ Քրիստինե Փափազյան, Աղավնի եւ Մարիամ Քեոսեյան քույրեր, Նեւրիկ Բասմանյան:

Հենց այս միանձնուհիներն են մեզ նայում առաջին լուսանկարից՝ ուրարներով ու լանջախաչերով:

Լուսանկարի կենտրոնում որբանոցի մայրապետ Քրիստինե Փափազյանն է: Նա Պոլսի Սբ Փրկիչ ազգային հիվանդանոցի երկարամյա մայրապետերից էր, որ որբանոցի վերատեսուչ մայրապետի պաշտոնն էր ստանձնել Կ. Պոլսի հայոց պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի հրավերով ու որոշմամբ՝ որբանոցի Երանուհի մայրապետի մահվանից հետո՝ 1902 թվականին՝ ուխտելով «կալ եւ մնալ հաւատարիմ ազգին եւ ճշմարիտ Մայր Որբոց»:

Քրիստինե մայրապետի թիկունքում եւ աջ կողմում Աղավնի եւ Մարիամ Քեոսեյան երկու քույրերն են, որոնք որբանոցում իրենց ծառայությունն էին սկսել նույն՝ 1902 թվականին՝ իբրեւ աջակից Քրիստինե մայրապետի: Նորընծա քույրերին եւս մայրապետական սքեմ եւ քող էր շնորհել Օրմանյան պատրիարքը 1904 թվականին՝ որբանոցում երկու տարվա ուխտյալ ծառայությունից հետո:

Քրիստինե մայրապետի ձախ կողմում քույր Նեւրիկ Բասմանյանն է՝ որբանոցի նախկին սանուհիներից: Սբ Փրկիչ ազգային հիվանդանոցում անցնելով հիվանդապահության դասեր՝ 1906 թվականին նա վերադարձել էր որբանոց՝ խնամելու հիվանդ որբուհիներին եւ նույն թվականին էլ որբանոցի մատրան մեջ պատրիարքի օրհնությամբ ստացել էր մայրապետական քող եւ սքեմ:

Երկրորդ լուսանկարը, որտեղ հինգ միանձնուհիներ են, կարելի է ենթադրել, որ արվել է 1933 թվականին: Այս թվականը եւս հիշարժան է Գալֆայան որբանոցի համար, որի մայրապետն արդեն ավելի քան մեկ տասնամյակ Աղավնի Քեոսեյանն էր:

Աղավնի Քեոսեյանին մայրապետական խաչն ու մատանին փոխանցվել էր 1919 թվականին՝ Քրիստինե մայրապետի մահվանից հետո: Իսկ նվիրյալ քույրերի շարքերն այս ընթացքում լրացրել էին նաեւ նորերը՝ որբանոցի երկու նախկին սանուհիներից Արուսյակ Մխիթարյանը եւ Զարմուհի Մեհրապյանը:

Արուսյակ Մխիթարյանը մայրապետական քող եւ օրհնություն էր ստացել 1919 թվականին՝ Զավեն պատրիարք Եղիայանի կողմից՝ որբանոցի 53-րդ տարեդարձի օրը: Նա որբանոցում ուսուցչի պաշտոն էր վարում՝ դասավանդելով հայերեն եւ ֆրանսերեն:

Զարմուհի Մեհրապյանին 1925 թվականին մայրապետական քող էր շնորհել պատրիարքական տեղապահ Գեւորգ արքեպիսկոպոս Արսլանյանը: Նա եւս ուսուցչությամբ էր զբաղվում՝ ասեղնագործության դասեր տալով որբանոցի սանուհիներին:

Եվ ահա 1933 թվականի նոյեմբերի 24-ին, երբ տոնվում էր որբանոցի 67-րդ տարեդարձը, մի նոր նշանակալից իրադարձություն էր որբանոցում:

Աղավնի մայրապետի միջնորդությամբ այդ օրը Կ. Պոլսի հայոց պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Նարոյանը դպրության չորս աստիճան եւ ուրար կրելու իրավունք է շնորհում Արուսյակ եւ Զարմուհի քույրերին: Նրանք եւս խնկարկելու եւ Ավետարան կարդալու իրավունք էին ստանում պատարագի ժամանակ:

Սակայն առավել նշանակալից էր սարկավագական ձեռնադրությունը: Նույն օրը սարկավագ է ձեռնադրվում Աղավնի մայրապետը՝ իրավունք ստանալով կուսանոցի մատրան մեջ կատարել սարկավագի համար սահմանված բոլոր պաշտոնները:

Երկրորդ լուսանկարի առջեւի պլանում սարկավագուհի Աղավնի մայրապետն է՝ լանջախաչով եւ ուրարով:

Աղավնի մայրապետի թիկունքում՝ ձախից, քույր Արուսյակ Մխիթարյանն է, ապա՝ Մարիամ Քեոսեյանը: Նրա կողքին Զարմուհի Մեհրապյանն է, իսկ Աղավնի մայրապետից աջ Նեւրիկ Բասմանյանն է՝ մեզ ծանոթ առաջին լուսանկարից:

Ի դեպ՝ պահպանված է նաեւ մեկ այլ լուսանկար, որտեղ կրկին այս հինգ միանձնուհիներն են՝ միանձնական քողով եւ սքեմներով:

Վերջում հավելենք, որ լուսանկարներում պատկերված բոլոր այս միանձնուհիները եղել են որբանոցի նվիրյալները, որբանոցի հիմնադիր Սրբուհի Գալֆայանի արժանի հետնորդները, որոնց ջանքերով Գալֆայանը դարձել է պոլսահայ համայնքի նշանակալի հաստատություններից մեկը՝ ապաստան եւ կրթություն տալով հարյուրավոր որբ աղջիկների:

Նրանցից Մարիամ Քեոսեյանը 1955 թվականին քրոջ՝ Աղավնի մայրապետ Քեոսեյանի մահվանից հետո դարձել է որբանոցի հաջորդ մայրապետը՝ շարունակելով նույն նվիրումով ծառայել որբանոցին:

Գալֆայան քույրերի աշխատանքն արժանացել է նաեւ Ամենայն Հայոց կաթողիկոսների գնահատանքին: Գեւորգ Ե կաթողիկոսը 1923 թվականի կոնդակով լանջախաչ կրելու իրավունք է շնորհել մայրապատ Աղավնի Քեոսեյանին: Պահպանված են նաեւ Խորեն Մուրադբեկյան կաթողիկոսի՝ 1938 թվականի մարտի 12-ի օրհնության կոնդակը՝ ուղղված ավագ սարկավագուհի Աղավնի մայրապետին, եւ Վազգեն Ա կաթողիկոսի կոնդակը՝ շնորհված Գալֆայան ուխտի առաքինազարդ Մարիամ մայրապետ Քեոսեյանին:

Բոլոր այս միանձնուհիների աճյուններն ամփոփված են Շիշլիի հայկական գերեզմանոցում՝ Գալֆայան ուխտի միաբանության քույրերի ընդհանուր շիրմաքարի տակ:

Հեղինե ՄԿՐՏՉՅԱՆ

Համաստեղի «Սպիտակ ձիաւորը» վեպը



➥ էջ 6

Մինչ վարպետ Մակարը փորձում էր Մարտիկին հեռու պահել այդ օտար սիրուց,– «...գեղեցիկ մզկիթ մըն է Զեյնապը, տղաս: Անոր մեջ խունկի հոտ չկայ, մեր շարականներուն ձայնը չկայ: Հայ աղջիկը տարբեր է, տղաս, հայ աղջկան սիրտը խունկով ու շարականով լեցուն եկեղեցի մըն է: <...>: Դուն պիտի սիրես այն տեսակ աղջիկ մը, որ քեզի թեւ տա գմբէթին վրայ խաչը դնելու» (էջ 71, 103),– սերն էլ ավելի է խորանում. «Զեյնապը լերան մը ծանրութիւնով նստած էր անոր մէջ» (էջ 113):

Աստիճանաբար պատումը մտնում է բուն վիպական հուն, գործողությունների մեջ է ներքաշվում Վարդաձոր գյուղը, որ Բերդակից հետո դառնում է տարածքային հիմնական կենտրոնը՝ մարդիկ, կապեր, կենցաղ եւ հիմնականը՝ հայրենասեր ուժեր, որոնց հավաքատեղին ջրաղացն էր: Հայության հիմնական պատկերը սա է՝ քրդերի ու թուրքերի հաճախակի հարձակումներ հայ գյուղերի վրա, թալանված տներ, ավերված եկեղեցիներ ու մատուռներ, ճանապարհին՝ ունեզրկված, ծառից կախված հայ վաճառական, ծեծված, նվաստացված ու սպանված հայ հոգեւորական, մահվան սպառնալիքից լարախաղացների ծաղրածուի (յալանչու) վերածված հայ որմնադիր վարպետ: «Երեք օր Վարդաձորի վրայէն թռչուն չէր կրնար անցնիլ: Գիւղի բանիմացները ախոռներու մէջ բանտարկուած էին: Դաշտի աշխատանքները երեսի վրա ձգուած էին: Ժանտարմներուն համար կը մորթեին հաւեր, ոչխարներ: Եկեղեցիին մէջ ձիեր կապած էին: Փողոցներուն մէջ՝ թափուած ցորեն, տուներուն մէջ՝ կոտրուած փեթակ: Գիւղի մեծաւորները օրը մի քանի անգամ ծեծի տակ էին: <...>: Վարդաձորը բաց գերեզման էր դարձեր» (էջ 142):

Վարդաձորը դատարկելն ու գյուղովի սար բարձրանալը պատահական չէր, քանի որ ջարդերից խուսափելու նպատակով իրականում այդպես եղել է այլ գյուղերի հետ, եւ իրենց տեղերում նրանց առաջնորդել են Անդրանիկի եւ Գեւորգ Չաուշի նման հերոսները:

Վեպում շրջանառվող հարյուրավոր անունների միջից Վարդաձորում առանձնանում են հերոսներ եւ դառնում գործող հիմնական կերպարներ. նրանց մեջ՝ հսկայական ուժի տեր, միաչքանի, ինչպես կիկլոպ, միամիտ Գոթան Կիրոն, որին հավատացրել էին, «որ գիշեր ժամանակ Վարդաձորի լեռը ոտքի կելլե ու կը քալե» (էջ 105), ֆիդայի Մարգարն ու մահացու հիվանդ Չեչո Գրիգորի կինը՝ «ժանդարմ ծեծող», հարկ եղած դեպքում տղամարդու պես հայհոյող, բայց երիտասարդ ու հմայիչ Սռման, որոնց գաղտնի սերը ողբերգական ավարտ է ունենում ֆիդայու համար: Առանձնանում են Վարդանը՝ իր խմբով, Մուշի ու Բիթլիսի կողմերում հայտնի ժողովրդական հերոս Արջ Սաքոն, ջրաղացպան Նավոն:

Ընդհանրապես, թեեւ սա 5–7 հիմնական հերոսի վեպ է, բայց գրեթե յուրաքանչյուր էջում գործողությունների մեջ ներքաշվող եւ կերպավորվող անունների շարքը շատ խիտ է ու բազմազան, եւ ամեն մեկն իր տեղն ունի, չզբաղված, անելիք չունեցող հերոս չկա, ինչպես կյանքում թեեւ կա ավելորդ մարդ, բայց չկա պատահական մարդ:

Ամենից շատ հերոսներ ունեցող հայ վեպը Դեմիրճյանի «Վարդանանք»-ն է՝ 370, բայց այստեղ այդ թիվը քառակի ավելի է: Հայ գյուղի պատկերը տրվում է գրեթե բոլոր հնարավոր կերպարների միջոցով՝ անպակաս են իրենց վաստակն ստեղծող հողի մշակները, գյուղի ներքին կենցաղն ի մի բերող կանայք ու տղամարդիկ, անասնապահը, այգեպանը, արհեստավորը, հովիվը, հեքիմն ու ջրաղացպանը, դիրքապահն ու ֆիդային, պատշարն ու ջուլհակը, ահելն ու ջահելը, անգամ հարբեցողը, խեւն ու խելագարը (Սարխոշ Գեւորգը, Մելոն՝ Վարդաձորի դաշտերի խելագարը):

Առանձնանում է քուրդ ավազակապետ Պեքիրը՝ հերթական մի գայլ այծերի հոտի մեջ, որ խափանում է Վարդաձորի տոնահանդեսը, հարամում ամեն ինչ. «Չգիտե՞ք, որ առանց իմ հրամանին զուռնի ու դհոլի ձայն չպէտք է ելլէ Վարդաձորի մէջ: <...>: Երեք օրէն Վարդաձորէն կուզեմ եռթը սայլ ցորէն, 40 ջվալ ալիւր, 20 էշի բեռ բամպակ, երկու լիր արծաթեղէն: Վաղը տասը սայլ ու երեսուն տղամարդ կը ղրկեք, որ ձիերուս ախոռ շինէն» (էջ 118, 120): Նրա դեմ ընդվզում է Մարտիկը՝ փայտե թոխմախը (փայտամուրճ, կոպալ) վրիպանքով նետելով նրա վրա, եւ իր վարպետի հետ մեկտեղ բանտարկվում:

Պեքիրից հետ չի մնում կինը՝ Զարեն, որ Մարտիկին հպատակեցնելու փորձերով ուզում է իր տիրական ուժի գիտակցությունը վերզգալ: Ինքն իրենով լիացած Զարեն ուներ «...ամազոնի հասակ եւ հարուստ մարմին ու երկու վայրի կաքաւներու նման հպարտ կուրծք: <...>: Ունէր արեւին տակէն անցնող վագրի մը շուքին չափ սեւ վարսեր» (էջ 122):

Ահա այս պայմաններում Վարդաձորում աստիճանաբար ուժեղանում է ֆիդայական շարժումը: Գլխատվում է Պեքիրը: Մարտիկն ազատվում է գերությունից եւ, որպես վերջին անպատվություն, անարգում Զարեհն՝ կտրում մազերն ու անտառում կիսամերկ կապում ծառին: Ամուսնու կտրված գլխի վրա Զարեն վրեժխնդրության ուխտ է անում եւ կարճ ժամանակ անց զինված զորքի վրաններ խփում Վարդաձորի լանջերին ու համագործակցում թուրքական բանակի հետ:

Այսքանից հետո է, որ Մարտիկը դառնում է Սպիտակ Ձիավոր, վերածվում հրեղեն տարերքի եւ կայծակի պես շանթահարում թշնամիներին: «Ամպի պէս թեթեւ, հովի պէս արձակ» (էջ 141) սպիտակ ձին նա խլում է իր ձեռքով ջախջախված ժանտախտակերպ թուրք «քէօսէ հարիւրապետից» (էջ 141) եւ այնպես ձուլվում ձիուն, որ ասես նրա հետ էլ ծնվել էր որպես ձիամարդ կամ մարդաձի: Նրա ձեռքին ասես Սասնա Դավթի Հավլունի թուրն է: Հեղինակավոր ձայնով պատմում էին, որ Սպիտակ Ձիավորի թուրը «հինաւուրց եկեղեցիի մը փլատակներուն մէջէն հանուած է» (էջ 390):

Նրա շուրջ հարյուրներով զինավառ խմբեր են հավաքվում, եւ նրանք իրենց «բոցէ թեւերով» (էջ 358) միշտ այնտեղ են, ուր բռնադատված հայությունն է:

Թուրքական ուժերն ավելացնում են ճնշումը՝ Վարդաձորում երեխա իսկ չպետք է ողջ մնար, էլ ուր մնաց Վարդանի խումբը: Գյուղը դատարկվում է, անասուններով, վրաններով բարձրանում սարը: Այստեղից էլ պետք է բռնկվեր ապստամբությունը եւ ջարդեր Սելիմ բինբաշիի 600 հոգիանոց զորքը:

Ահա այս պահից սկսվում է Սպիտակ Ձիավորի հեքիաթը: Արդեն նա աներեւույթ է, նրա մասին միայն պատմում են, լուրեր փոխանցում, որովհետեւ նրան չեն տեսնում, միայն լուրն է հասնում, թե ինչպես այստեղ կամ այնտեղ նա պատուհասեց թուրք կամ քուրդ մարդասպաններին: Կերպարի այսպիսի պատկերումը հիշեցնում է հին հունական թատրոնը, երբ որոշ հերոսների գործողությունները չէին պատկերվում, այդ մասին միայն խոսվում էր տեղեկություն հաղորդելու կարգով: Մարտիկի կերպարը դառնում է հայ ժողովրդի երազանքի մարմնացում, այն ուժը, որով պետք է դիմագրավեր թշնամուն: Բռնության ենթարկվող բոլոր հայ գյուղերի բնակիչների խոսքը նույնն է. «Մարտիկը, որ էս կողմերը ըլլար, մենք էս հալին չէինք իյնար» (էջ 191): Թուրք ժանդարմներին նա հայտնի էր Մարութ Ստեփան օղլի Մարտիկ անունով, որի գլուխը՝ որպես «ֆիրար», գնահատվում է հազար ոսկի:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հերոսների դրամատիկ հոգեվիճակները «Գեւորգ Մարզպետունի» վեպում

➥ էջ 7

Մուրացանն Աշոտ Երկաթի բերանով հաստատում է իր այն գաղափարը, որ ամեն ինչ նախասահմանված է ի վերուստ, որ իզուր են մարդկանց ջանքերը, եթե վերեւում արդեն ամեն ինչ որոշված է. «Մենք, սիրելի՛ բարեկամ, թշվառ խաղալիքներ ենք բնության ձեռքում» (էջ 278): Այս գաղափարը, առհասարակ, կարմիր թելի նման անցնում է ամբողջ վեպում եւ հնչում գրեթե բոլոր հերոսների շուրթերից: Աշոտ Երկաթն Աստծու կամքն է համարում նաեւ իր՝ թունավոր նետով վիրավորվելը. «Արժանի՞ էի այս ամենին, թե՞ ոչ, չգիտեմ, միայն գիտեմ, որ նախախնամությունն անարդար ոչինչ չէ տնօրինում: Պիտի խոնարհիմ ուրեմն նրա սուրբ կամքի առաջ եւ օրհնեմ նրա անունը գոնե այն մխիթարության համար, որ նա տվավ ինձ իմ տանջանքների մեջ» (էջ 343):

Արքայի ապրումներն ու հոգեկան աշխարհում տեղի ունեցող խմորումներն ավելի ակնհայտ են դառնում Սահականույշի հետ զրույցից, որի ընթացքում արքան ինքն է սկսում դատապարտել իրեն իր թուլության համար: Նա տանջվում է խղճի խայթից եւ անցյալի ծանր արարքներից, որոնք անդառնալի ու ողբերգական հետեւանքներ ունեցան: Մուրացանը դիպուկ է գտնում բարոյական պատիժներից ամենասարսափելին՝ խղճի խայթը, որը պատիժներից դառնագույնն է: Թագուհին թախանձում է մոռանալ անցյալը եւ սրբագործվել մի նոր առաքելությամբ, այնինչ ոճիրների ծանրությունը ճնշում է թագավորին եւ ավելի բորբոքում հանցանքի մեծությունը. «Երկնքի աստղերը կկողոպտեի վարձատրելու համար այն մարդուն, որը կկարողանար մոռացնել տալ ինձ իմ անցյալը... որ յուր դեղերով կամ կախարդական հմայությամբ հնար կգտներ իմ հիշողությունները բթացնելու: Մոռանա՞լ... Այո՛, այդ եմ կամենում, այդ է իմ միակ փափագն ու ցանկությունը»,– խոր տառապանքով ասում է արքան (էջ 281):

Աշոտը գիտակցում է իր հանցանքի մեծությունը, որն այդքան դժբախտությունների պատճառ էր դարձել. ինքն իրավունք չուներ խաղալու մի ողջ ժողովրդի ճակատագրի հետ, դառնալու բազմաթիվ չարիքների պատճառ. «Ամենքին կարելի է ներել, բացի նրանից, որ կոչված է մարդկանց բախտը կառավարելու, որ պաշտոն ունի ժողովուրդ հովվելու, առաքինության օրինակ եւ առաջնորդ հանդիսանալու... հասարակաց բարվույն ու երջանկության հսկելու... Ես այդպիսի մի պատասխանատու անձ էի, աստված ինձ պետ ու առաջնորդ էր կարգել այս ժողովրդյան: Բայց մի՞թե պատկառ մնացի ես իմ կոչմանը, մի՞թե իմ սրբազան պաշտոնը չանարգեցի, մի՞թե բազմաթիվ չարյաց պատճառ չդարձա... Ո՞վ կարող է ինձ ներել եւ ինչո՞ւ պիտի ներե» (էջ 285):

Զ. Ավետիսյանի դիպուկ բնութագրմամբ՝ այնտեղ, որտեղ հերոսներն առաջադրում են ներքին մարդու խնդիրը, հեղինակի կողմնակալ գաղափարաբանությունն այլեւս մղվում է հետին պլան՝ տեղի տալով հոգեբանական ներանձնավորմանը: Վեպում բացահայտվող մարդկային փոխհարաբերությունների հոգեբանական ողջ դրսեւորումը կրում է հենց այս ներքին



մարդու խնդիրը (*տե՛ս Ավետիսյան Զ., նշվ. աշխ., էջ 149*): Ասվածի լավագույն ապացույցն Աշոտ Երկաթի խոսքերն են. պարզ երեւում է, որ դրանք ասում է ոչ թե հայոց արքան, այլ պարզապես հասարակ, քրիստոնյա մարդ, որը տանջվում է խղճի խայթից, ամաչում իր արածների համար. «Ես քրիստոնյա եմ եւ խիղճ ունիմ. Այդ խիղճը տանջում է ինձ, նրա ձայնը խլացնում է իմ հոգվո լսելիքը... Ո՛չ, դրանց պատճառով չհեռացա, ոչ էլ հուսահատությունն ինձ հալածեց: Այլ խիղճը, իմ ներքին մարդը... Հանգիստ լիներ խիղճս, արդար լինեին իմ գործերը, այն ժամանակ թեկուզ բոլոր աշխարհը կանգներ իմ դեմ, ես չէի ընկճվի...» (էջ 282): Հենց այսպիսի հատվածներում է երեւում, որ թեեւ այս կերպարի դեպքում դրսեւորվել է գրողի սուբյեկտիվիզմը, թեեւ Աշոտ Երկաթի բերանով ասված խոսքերից շատերը մերկապարանոց են հնչում, սակայն պատմական շեղումները չեն ազդել գեղարվեստական մակարդակում կերպարի ինքնուրույնության վրա:

Շարունակելի

Սամվել ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am astghikstam@gmail.com
web կայք՝ **krishayas.wordpress.com**
Ստոր. տպագր. 28.04.2022 թ.
Տպաքանակը՝ 1225